

**«Մխիթար Մեքաստացի» կրթահամալիր
Ստեղծողի մոբիլ դպրոց**

**«Իմացումի հրճվանք» կրթական ծրագրի 5-6 տարեկանների ուսուցում
Ուսումնական պլան
2015-2016 ուսումնական տարի**

1. Ուսումնական պլանը «Ստեղծողի մոբիլ դպրոց» հեղինակային պետական (այլընտրանքային) կրթական ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր), սանի խնամքի և ուսուցման պայմանագրի հավելվածն է:
2. 5-6 տարեկանների ուսուցման խմբերը գործում են կրթահամալիրի Նոր դպրոցում, Դպրոց-պարտեզում, Գեղարվեստի կրտսեր դպրոցում, Հիմնական դպրոցում, Քոլեջում (այսուհետ՝ Դպրոց):
3. Ծնողի և հաստատության հարաբերությունները կարգավորվում են [ուսումնական պայմանագրով](#):
4. Ուսումնական պլանի պարզաբանումներում նշված կարգերը ուսումնական պլանի հավելվածն են: Դրանցում փոփոխությունները դպրոցի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է կրթահամալիրի տնօրենը:
5. Խումբ ընդունվում է այն երեխան (այսուհետ՝ սան), ում 5 տարին լրանում է մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 31-ը, ծնողն ընտրում է Ծրագիրը և սահմանված կարգով կնքում [ուսումնառության պայմանագիր](#): Խմբում սաների թիվը 20-25 է:
6. Ծրագրի իրագործման, խմբի գործունեության պատասխանատու-կազմակերպիչը դասավարն է, որ [սահմանված կարգով](#) վարում է Դպրոցի կայքում հրապարակված իր (խմբի) ուսումնական բլոգը:
7. Ուսուցում-զարգացումը կազմակերպվում է ամբողջական համակարգով, ինտեգրացված գործունեությամբ, առանց առարկայական բաժանումների:
8. Դասավանդողը, ուստարվա երկրորդ կիսամյակից նաև՝ սանը, որպես ուսումնական գործիք, օգտագործում է համակարգիչ՝ (նոթբուք, նեթբուք) տանն ունեն համացանց:
9. Ծրագիրը դպրոցում ապահովում է համացանցից, համակարգչից, էլեկտրոնային գրատախտակից, ձայնագրիչից, ֆոտոխցիկից, բջջային հեռախոսից ուսումնական նպատակներով անարգել օգտվելու հնարավորություն:
10. Սաների գործունեության բովանդակությունը որոշվում է ըստ Ծրագրի, ըստ ամենամսյա, ամենշաբաթյա աշխատանքային նախագծերի:
11. Ուսումնական պլանի բաղադրիչները՝
 - խոսքի զարգացում
 - երաժշտություն-պար-խաղ
 - մարմնակրթություն
 - բնագիտություն-բույսերի և կենդանիների խնամք
 - թվաբանություն
 - կերպարվեստ-տեխնոլոգիա-ձեփ
 - մեդիատեխնոլոգիաներ
 - սանի ամենօրյա գործունեության պարտադիր բաղկացուցիչն են:

12. Խոսքի զարգացումն իրականացվում է գործունեության բոլոր ձևերով: Թատերական, երաժշտական խաղերը խոսքի զարգացման կազմակերպման բաղկացուցիչն են: Տառաճանաչությունն իրականացվում է գործունեությանը զուգահեռ, անընդհատ բավարարելով սաների՝ գրել-կարդալու պահանջն ու անհրաժեշտությունը:
13. [Երաժշտական գործունեությունն](#) իրականացվում է «Դասարան համույթ» ծրագրով, ներառում է կոմիտասյան երգերի ուսուցում, երգերի խաղարկում-բեմադրում, շրիկանների և այլ գործիքների, միջավայրի, երաժշտության ունկնդրում, ռիթմիկա և շարժում, ծանոթացում երաժշտական գործիքներին, գործունեության տարբեր ձևերի ներառում-կիրառում:
14. [Սաների մարզական գործունեությունն](#) իրականացվում է որպես մարմնակրթական մատոնոլոգիայի (մշակույթի) ամբողջական համակարգ՝ ամենօրյա ֆիզիկական գործունեությամբ՝
 - մարմնամարզություն
 - լող
 - հեծանվավարություն
 - մարզական խաղեր
 - [ազգային – ծիսական, բակային խաղեր](#)
 - պար-պլաստիկա:
15. [Բնագիտությունն իրականացվում է](#)
 - միջավայրի, կենդանիների, բույսերի խնամքով
 - բնագիտական փորձերով
 - ուսումնական ճամփորդությունների միջոցով
 - խոհանոցային, բակային և այլ գործունեություններով:
16. Թվաբանությունն՝ [բանավոր հաշիվ](#), չափումներ, համեմատություններ, համադրումներ, առևտուր, խոհանոցային գործունեություն, ֆլեշմոբեր, մարզական, գործունեության այլ ձևեր:
17. Կերպարվեստ-տեխնոլոգիա-ձեփ. իրականացվում է գործունեության տարբեր ձևերով, [հնարավոր բոլոր միջոցներով](#)՝ ձեսերի, ներկայացումների, խաղերի, ստուգատեսների միջոցով:
18. Սաների ուսուցում-զարգացումը կազմակերպվում է տանը և դպրոցում կրթահամալիրի ուսումնական օրացույցով, սահմանված կարգով կազմված և հրապարակված ամսական, շաբաթական, ուսումնական նախագծերով՝ [ստուգատեսների](#), ձեսերի, տոների, [մանկավարժական հավաքների](#), ճամփորդությունների միջոցով:
19. Սաների գործունեությունը, ըստ նախագծի, սահմանված կարգով, կարող է իրականացվել դպրոցից դուրս՝ ցուցահանդես, այգի, գյուղ, գրադարան, թանգարան...
20. Սահմանված կարգով իրականացվող ուսումնական ճամփորդությունները ուսումնական գործունեության մասն են:
21. Գործունեության բացօթյա կազմակերպումը սաների կրթական իրավունքի իրականացումն է:
22. Սանն իր ներկայությունը էլեկտրոնային մատյանում գրանցում է անձամբ. սա [խմբի առավոտյան ձեսի բաղկացուցիչն է](#):
23. Սաների անհատական արժեքային համակարգի, հմտությունների, կարողությունների որակական բնութագիրը, ցուցանիշները դասվարը գրանցում է

[Սանի աճի և զարգացման դիտարկման թերթիկում](#), արդյունքում կազմում է սանի անհատական զարգացման մոտակա պլանը: Թերթիկի տվյալները հաստատում է նաև ծնողը:

24. Սանի ֆիզիկական, ֆիզիոլոգիական, ընտանեկան տվյալները դասվարը գրանցում է [Սանի թերթիկում](#):
25. Սաների ուսումնական գործունեության արդյունքները ներկայացվում են ամենօրյա լուսաբանմամբ, ուսումնական օրացույցով նախատեսված [ամենամսյա ստուգատեսներով](#), [TV5-6-ի](#), [Ռադիո 5-6-ի հաղորդումներով](#), [Ես կարողանում եմ](#) կիսամյակային նախագծով, ստեղծված-հրապարակված էլեկտրոնային ուսումնական նյութերով:
26. Խումբը սահմանված կարգով մասնակցում է կրտսեր դպրոցի ընդհանուր պարապմունքին:
27. Ուստարվա ավարտին (հունիսի 15) սանը դասվարի ներկայացմամբ փոխադրվում է [ուսուցման երկրորդ տարի](#):

[Իմացումի հրճվանք կրթական ծրագրի 5-6 տարեկանների ուսուցման-զարգացման իրականացման կարգ](#)